600.0208.31.05.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մայիսի 2017 թվականի №208Ա

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 2-ի №339Ն որոշումը և հաշվի առնելով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականի մայիսի 18-ի №403 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝
   1) 2009 թվականի օգոստոսի 13-ի «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը Վրաստանի Հանրապետությունից էլեկտրական էներգիայի ներկրման լիցենզիա տրամադրելու մասին» №505Ա որոշումը.
   2) 2010 թվականի օգոստոսի 11-ի «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության №0325 լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու մասին» №419Ա որոշումը.
   3) 2010 թվականի դեկտեմբերի 28-ի «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության №0325 լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու մասին» №745Ա որոշումը.
   4) 2011 թվականի օգոստոսի 24-ի «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության №0325 լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու մասին» №387Ա որոշումը.

5) 2012 թվականի հուլիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի օգոստոսի 13-ի №505Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» №268Ա որոշումը.

6) 2013 թվականի դեկտեմբերի 18-ի «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության №0325 լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու մասին» №460Ա որոշումը.

7) 2016 թվականի մարտի 23-ի «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության №0325 լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու մասին» №57Ա որոշումը:

2. «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2016 թվականի ապրիլի 22-ի №652-3425 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացված №ՊԲԵՆ16/37-36 երաշխիքի համաձայն ստանձնած հինգ հարյուր հազար դրամ երաշխիքային պարտավորությունից:

3. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
31 մայիսի 2017թ.
ժամը 16⁰⁰